

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂԻԱԾՔ ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

— Ի 10-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ՝ զի զԽոսրով վարդապետն զյանձնեալ ի դատ մարմնաւոր իշխանութեան՝ անյարմար է կարդել ի պաշտօն վանահօր Հառիճոյ վանից մինչ ցաւարտ դործոյ մեղադրանաց նորա ի մարմնաւոր դատարանի՝ ուստի փոխել զօրագրական վճիռ Սինոդիս յ31-ն դեկտ. անցեալ ամի, թողլով զԽոսրով վարդապետն ի վանս Ս. Էջմիածնի առայժմ, պատուիրելով դանձապահի Սինոդիս շարունակել զտուչութիւնն միաբանական անդադրամոց նորա, առանց ոռճկի, ի միոյն Յունուարի տարւոյս ցառանձին տնօրէնութիւն։ Հ. 218։

— Ի 14-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց՝ զի Մարիա Վասիլևնա Զանկևիչ և Նատալիա Նիկոլաևնա Բրիլկին ըստ թոյլտուութեան Նահանգապետի Տփխեաց և ըստ տնօրէնութեան կոնսիստորիային Հայոց

Վրաստանի, նաև ըստ սահմանեալն կարգի, մտեալ են ի ծոց եկեղեցւոյ Հայոց և ապա թէ պսակեալ ըստ ծիսի նոյն եկեղեցւոյ՝ ուստի զպսակադիր քահանայս ճանաչել արդար և անպարտ։ Հ. 225։

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց՝ զի Թերբոն Գոգելաշվիլի ընկալեալ է ի ծոց եկեղեցւոյ Հայոց ըստ մակագրական թոյլտուութեան Նահանգապետին Տփխեաց և տնօրէնութեան կոնսիստորիային Հայոց Վրաստանի և ապա թէ մտեալ է յամուսնութիւն ըստ ծիսի եկեղեցւոյ մերոյ՝ ուստի զմկրտող և զպսակող զնա քահանայս ճանաչել արդար և անպարտ։ Հ. 229։

— Ի 17-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ ազատ համարել զՏ. Աբիստակէս վարդապետն ի պաշտամանէ հիւրընկալի Մայր Աթոռոյ և յայդ պաշտօն կարգել զՏ. Ներսէս վ. Տէր Մելքայէլեան, պատուիրելով Վանական Կառավարութեան յանձնել նորոգ կարգելոյն զամենայն կահ-կարասիս, զանկողինս և զայլ իրս հիւրատան պատշաճն ցուցակաւ։ Հ. 232։

— Ի 19-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ զԴաւիթ քահանայն Փէշիչեան Հին Խրիմու և զՍարգիսն Ներսիսեան յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան ըստ 1525, 1549 և 1552 յօդ. Պատժ. Օր. և զկնի վճռահատութեան և եթէ դատարանին լսել զզեկուցումն վասն խնդրոյ վաւերականութեան պսակի Աղնուի Եղիազարեանց ընդ Սարգսի Ներսիսեան։ Հ. 239։

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ թողլով զբընութիւն նախահաշուի ագարակի Մ. Աթոռոյ առանձին զեկուցման՝ պատուիրել գիւղատնտեսին առնել զանհրաժեշտ բարեփոխութիւնս ի բարեկեցութեան ծառայողաց ագարակի նկատմամբ բնակարանի, մահճակալի (թախտի), խոտեայ ներքնակի, բաղանեաց և բժշկական օգնութեան նոցա, այլ և տալ իւրաքանչիւրոյն ի ծառայողաց յաւելեալ աննդադրամ՝ երկ երկու ռուբլիս յամիսն սկսեալ ի միոյն այսր մարտի։ Հ. 240։

— Ի 21-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ շրջաբերականաւ տալ կոնսիստորիայից Հայոց հրահանգ, ի փոխումն շրջաբերականի յ2-ն օգոստոսի 1906 ամի, զի նախ՝ պսակ հայ լուսաւորչականի ընդ անձին Օրթոդոկսի պարտի անպայման կատարել ըստ ծիսի Օրթոդոկս եկեղեցւոյ, և երկրորդ՝ զաւակունք, ծնեալք յայդպիսի պսակաց, պարտին մկրտել ըստ ծիսի Օրթոդոկս եկեղեցւոյ, յորժամ մին յամուսնոց շարունակէ մնալ Օրթոդոկս. բայց ի դէպս անցանելոյ վերջնոյս ևս ի դաւանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակունք կրտսերագոյնք քան զ14 ամս պարտին հետևել հաւատոյ ծնողացն, այն է դաւանութեան մերս եկեղեցւոյ, իսկ աւագագոյնք քան զ14 ամս պարտին մնալ Օրթոդոկս մինչ ցարբունս հասակի, զկնի որոյ կարեն ազատ ընտրել զդաւանութիւն ըստ ցանկութեան իւրեանց։ Հ. 248։

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաւան գտեալ ընդ առաջարկ Տ. Տեղակալի՝ զմին ի սանուց Հոգևոր ճեմարանի Ս. Էջմիածնի, որք պահպանին ծախիւք Մայր Աթոռոյ, համարել որդեգիր Նորին պայծառապատուութեան Տ. Փոխարքային կոմս Իլարիոն Իվանովիչ Վորոնցով—Դաշկովի։ Հ. 252։

— Ի 26-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ ծանուցանել փոխ—Թեմակալին Երևանայ, եթէ անթոյլատրելի է միանգամայն տալ ուժեր կենսաթոշակ ի վիճակային արդեանց։ Հ. 274։

— Ի 28-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ բաշխել զ31 խալուար ցորեանն ի շտեմարանէ Մ. Աթոռոյ չքաւորաց Վաղարշապատ գեղջ ըստ ցուցակին, հաստատելոյ ի ձեռն տանուտեառն հասարակութեան Վաղարշապատայ այնու պայմանաւ, զի իւրաքանչիւր երեքին անձինք ի ցուցակագրելոցն երաշխաւորք լիցին վասն իրեար փոխադարձաբար առ ի դարձուցանել զփոխառեալ ցորեանն ի շտեմարան Մ. Աթոռոյ, ի ժամ կալօրէից յայսմ ամի։ Հ. 282։

— Ի 28-ն մարտի Սինոդն հրամայեաց թոյլ տալ

Կոնսիստորիային Երևանայ ընդունել զՅովակիմն Խաչատրեանց ի կոչումն հոգևոր և առաջադրել փոխ-թեմական Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Արփա գեղջ Շարուր-Դարալագեազ գաւառի։ Հ. 285.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ունելով ի նկատի զայտարարութիւն Կոնսիստորիային Շամախւոյ և զվերջին հեռագիր նորին, դադարեցուցանել զՄեսրոպ քահանայն Տէր Ոսկանեանց ի քահանայագործութենէ և առաքել զնա յապաշխարութիւն ի վանս Սևանայ վեցամսեայ ժամանակաւ։ Հ. 286.

— Ց 2-ն ապրիլի Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ Կոնսիստորիային Վրաստանի ընդունել զՅարութիւն Տէր Խաչատրեան ի հոգևոր կոչումն և առաջադրել առաջնորդի թեմին ձեռնադրել զնա ի քահանայ Բարանա գեղջ գաւառին Ղազախի։ Հ. 299.

— Ի 4-ն ապրիլի Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ Կոնսիստորիային Աստրախանի ընդունել զԴասպարն Մեղնիկեանց ի հոգևոր կոչումն և առաքել զնա վասն ձեռնադրութեան ի քահանայ Ղարաջալիլ գեղջ յո յարմար համարեսցի Ատեանն։ Հ. 308.

— Ց 9-ն ապրիլի Սինոդն հրամայեաց՝ կարգելով զՀաքարիա վարդապետ Լալայեանց ի կատարող պաշտաման վանահօր վանուցն Ճալէթու, հայցել զհաւանութիւն Նահանգապետին Գանձակայ առ ի հաստատել զնա ի պաշտաման վանահօր։ Հ. 317.

— Ի 28-ն ապրիլի Սինոդն հրամայեաց՝ դարձուցանելով զվկայական Խուրշուդի Տէր Ղազարեանց՝ պատուիրել Կոնսիստորիային Երևանայ ընդունել զնա ի հոգևոր կոչումն և փոխ-թեմակալին Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Ղոյթուր գեղջ, գաւառին Դարալագեազի։ Հ. 338.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել Կոնսիստորիային Երևանայ ընդունել զՅովհաննէսն Ծաղի-

կեանց ի հոգևոր կոչումն և փոխ–թեմական Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Շէնգաւիթ գեղջ գաւառին Երևանայ։ Հ. 341.

— Ի 30-ն ապրիլի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի յարգանս զինդիր հայ հասարակութեան Աստրախան քաղաքի և ունելով առաջի աչաց, զի վասն երից լրացուցիչ կէտից ի նախագծի կանոնագրութեան թեմական դպրանոցին Աստրախանի նախարարութեան Ներքին Գործոց հարցեալ էր զեղրակացութիւն ի Տէր հանգուցեալ Կաթուղիկոսի ամենայն հայոց, խնդրել ի նախարարէ Ներքին Գործոց թոյլ տալ բանալ հետզհետէ զնոր բաժանմունս ի դպրանոցին ի վերքան զԲ.-ն ըստ ծրագրի և կանոնագրութեան թեմական դպրանոցին Ն. Նախիջևանի և Ռոսարաբիոյ, իսկ զառաջարկութիւն կանոնագրութեանն ի հաստատութիւն թողուլ ցընտրութիւն կաթուղիկոսի ամենայն հայոց, որ և ունի տնօրինել ըստ խնդրոյս զարժանն։ Հ. 345.

— Ի 7-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ ծանուցանել Սոփիայի Բէգլարեանց ի ձեռն Կոնսիստորիային Վրաստանի, եթէ թոյլատուութիւն պսակի զրկելոցն յիրաւանց մտանելոյ ի նոր ամուսնութիւն վերապահեալ է կաթուղիկոսի ամենայն հայոց։ Հ. 360

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ կարգել ի պաշտամանս անդամոց վերաստուգիչ յանձնաժողովոյ, զԲենիկ, զԼևոն և զՆերսէս վարդապետս՝ յանձն առնելով նոցա, նախագահութեամբ Բենիկ վարդապետի, յամսոյ ամիս ստուգել զամենայն դրամական հաշիւս հաստատութեանց Մ. Աթոռոյ, այն է՝ ձեմարանի, վանական կառավարութեան, տպարանի, ագարակի և հիւրատան և զարդիւնս ստուգութեան առաջի առնել Սինոդիս։ զՏէր Բաբգէն վարդապետն, զԿ. Տէր Գրիգորեան և զԱ. Օհանջանեան ազատ կացուցանել յանդամութենէ ծանձնաժողովոյն ըստ խնդրոյ իւրեանց։ Հ. 365.

Ամուսնալուծութիւնք

— Ի 14-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստորիային Երևանայ՝ լուծանել զպսակ Յովակիմայ Բաբայեանց, ընակչի Վ.երին Խաթունաբիս գեղջ, և տալ միայն առն իրաւունս նորոյ ամուսնութեան։ Հ. 230։

— Ի 17-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ հաստատել զեղբակացութիւն կոնսիստորիային Երևանայ, լուծանելով զպսակ Յովհաննու Օրտուեանց, ընակչին Ղուլիբէկ-Դիզա գեղջ, գաւառին Նախիջևանի, ընդ Ովսաննայի Ստեփանեան, տալով միայն առն իրաւունս նորոյ ամուսնութեան։ Հ. 236։

— Ի 19-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ, լուծանել զպսակ Եփրոսինեայ Կրասելնիկեան ընդ վերաբնակելոյն ի Բաքու քաղաքին Երուանդայ Պալեան, տալով իրաւունս նորոյ ամուսնութեան կնոջն այժմ և եթ, իսկ առն՝ զկնի արկանելոյ զնա ընդ միամեայ եկեղեցական ապաշխարանաք։ Հ. 237։

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ըստ միջնորդութեան կոնսիստորիային Երևանայ՝ չեղեալ համարել զպսակ Դանիէլի Ղազարեանց, գաղթականի, Վանեցւոյ, ընդ Զարուհւոյ Ղևոնդեան, թոյլ տալով երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն, քանզի պսակ նոցա չէ կատարեալ օրինական կարգաւ՝ ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ։ Հ. 238։

— Ի 21-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ՝ լուծանել զպսակ ընակչի Մոսկուա քաղաքի Մովսիսի Սահարբէկեանց ընդ կնոջն Եղիսաբէթի, թոյլ տալով միայն առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում. իսկ զկինն Եղիսաբէթ և զՅովհաննէսն Սահարբէկեանց արկանել ընդ եկեղեցական ապաշխարութեամբ վեցամսեայ ժամանակաւ ըստ 15 յօդ. 34 Պատժ. Օր։ Հ. 251։

— Ի 24-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ — ոչ պատանելով զօրինական հիմն վասն լուծման պսակի Բաքուաբնակ Կոստանդնի Այտինեանց ընդ Ովսաննայի Աւաքելեան Այտինեանց՝ մերժել զկնդիր ամուսնոյն, որ վասն լուծման պսակի նոցա, պատուիրելով կոնսիստորիային Շամախւոյ տնօրինել յորդորել զամուսինն գալ ի հաշտութիւն և ի համաձնակութիւն ընդ միմեանս։ Հ. 359։

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստորիային Երևանայ, լուծանել զպսակ Հերիքնազի Կարապետեան ընդ Յակոբայ Սուքիասեան ի պատճառս անյայտ բացակայութեան առն և թոյլ տալ կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն: Հ. 260:

— Ի 25-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստորիային Շամախւոյ՝ լուծանել զպսակ Հռիփսիմեայ Սաղաթէլեան, ընակչուհւոյ Շուշի քաղաքի, ընդ Յարութիւնի Վարդապետեան և տալ միայն կնոջն իրաւունս նորոյ ամուսնութեան: Հ. 269:

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ոչ գտանելով զօրինական հիմն լուծման պսակի Մկրտչի Մուսաբէկեանց, ընակչի Երևան քաղաքի, ընդ Շուշանիկան Խաժակնեան, մերժել զխնդիրս առն, որ վասն լուծման պսակի նորա, պատուիրելով կոնսիստորիային Երևանայ տնօրինել յորդորել զամուսնոն գալ ի հաշտութիւն և ի համաձնակութիւն ընդ միմեանս: Հ. 270:

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստորիային Երևանայ՝ լուծանել զպսակ ընակչի Իմրլու գեղջ, գաւառին Էջմիածնի, Մկրտչի Թադէոսեան ընդ կնոջն Նիգեարի Խոսրովեան, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 271:

— Ց 2-ն ապրիլի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Նոր–Նախիջևանի լուծանել զպսակ Սրբուհւոյ Տանրէճեանց ընդ առն Յովհաննիսի Տանրէճեանց, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 300.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ոչ գտանելով հիմն ինչ վասն լուծանելոյ զպսակ Զարէխեան ամուսնոց՝ զխնդիրս ընակչուհւոյ Նոր–Նախիջևան քաղաքի Աննայի Զարէխեանց թողուլ առանց հետևանաց: Հ. 301.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Նոր–Նախիջևանի, լուծանել զպսակ Իսկուհւոյ Թումբուխչեան ընդ առն Վարդերեսի Թումբուխչեան, թոյլ տալով կնոջն և ևթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 302.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, լուծանել զպսակ Նամամայ Ա.թանասեան, ընակչուհւոյ Օրբան գեղջ գաւառին

նուխուոյ, ընդ անդարձ աքսորեալ առն Յակոբջանայ Արզումանեանց և թոյլ տալ կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 303.

— Յ 9-ն Ապրիլի Սինոդն հրամայեաց՝ համեմատ օրագրական վճռոյ Սինոդին, որի 6-ն Նոյեմբերի 1902 ամի, լուծանել զպսակ ընակչի Արազի գեղջ, Նահանգին Կարուց, Արմենակայ Գրիգորեան ընդ Հերիքնազի Յովհաննիսեան, թոյլ տալով միայն առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 320.

— Ի Նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային Երևանայ լուծանել զպսակ ընակչուհւոյ Բլեսեր գեղջ, գաւառին Էջմիածնի, Մագթաղի Նիկողայոսեան ընդ Գրիգորի Թովմասեանց և առն միայն թոյլտալ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 322.

— Յ 30-ն Ապրիլի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի — լուծանել զպսակ ընակչի Գոմ գեղջ գաւառին Ախալքալակայ, Գալստի Փիլոսեան ընդ կնոջն Սալվիի Յովհաննիսեան առ անյայտ բացակայութեան նորին, տալով առն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 343.

— Յ 2-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի — լուծանել զպսակ Նիկողայոսի Մելիք-Նուբարեանց ընդ Նատալիայ, թոյլ տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 348.

— Ի Նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զխոստովանութիւն կնոջն զանհաւատարմութենէ իւրմէ, լուծանել զպսակ Կարապետի Գալֆայեան ընդ կնոջն Թագուհւոյ, առն և եթ թոյլատրելով մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 349։

— Ի 5-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Ն. Նախիջևանի լուծանել զպսակ Յակոբայ Պապեանց ընդ կնոջն Շուշանիկ, թոյլ տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 358.